ՍԱՅԱԹՆՈՎԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Մի թաքավոր ա ըլըմ, դա ունենըմ ա մի կնիկ, մի տղա, մին էլ մի սիրուն աղջիկ։ Դրանք սովորութին են ունենըմ, ամեն տարի գնըմ են Քրիստոսի հմար մատաղ անըմ (նրա գերեզմանին մեռնիմ, էրեսս նրա ոտի տակը...)։
Հմի էլ ախչիկը հասնըմ ա, հմա հասած ախչկանը հետներուն տանիլն ադաթ չի ըլում։ Ում պահ տան, ում չի պահ տան, բերըմ են իրենց քաղաքի ղրաուլնու վենձին պահ տալի, թամբահ անըմ, ասըմ.— Ամեն օր հացն էլ, խորակն էլ կտանես ակոշկի ծակովն իրան կտաս, եդ կդառնաս։
Ախչկանն էլ ասըմ են.— Միչի կռնից դուռը ղայիմ կփագես, գանք տենանք դռան տակին մի թզաբոյ կանանչ ա դուս էկել։
Տիե ասըմ են ու իրանք մի ամսով՝ հեր ու տղա, մին էլ մերներուն գնըմ են։
Էն ղրաուլբաշին էլ ամեն օր բերում ա հաց ու ջուրը ակոշկի նեղ ըրանքովը տալի էդ աղջկանը, եդ դառնըմ։
Մի օր էլ, որ հացը բերըմ ա տալի, աչքովն ա ընգնըմ աղջկա շարմաղ ձեռը, խելքը գնըմ ա, ասըմ ա.— Որ ձեռն էսքան սիրուն ա ու շարմաղ, բա ի՞նքն ինչքան կլի սիրուն։
Մի օր, էրկու օր, դա մտկափոխվում ա, ասըմ ա.— Թեկուզ աշխարհն էլ գըլխիս փուլ գա, ես սրա գլուխն իմ գլխի հետ մին տեմ անիլ։
Ի՞նչ անե, ի՞նչ չանե, գնըմ ա մի ջադու պառավ ա գդնըմ, մի բոլ փող ա տալի ասըմ ա.— Էս գործը գլուխ տիս բերիլ։
Ասըմ ա.— Աչքիս վրա։
Ջադուն գալիս ա էդ ախչկա դուռն թխկացնըմ ա.— Դուռը բաց արա, ազիզ ջան, քո մոքիրը քոռանա, հազարենցը մի անգամ էկել եմ, էն էլ քիրս ու փեսես գնացել են մատաղի, բաց արա քեզ էլա տենամ։
Նաչար ախչիկը հվատըմ ա։ Մին ուզըմ չի բաց անե, հմա եդ ասըմ ա.— Մոքրիս հմար ի՞նչ տին ասիլ, հազիր մենակ չեմ մնալ, ինձ կպահե։
Կանանչը նոր ավլուկի պես արած ա ըլըմ դռան տակին, զարթելով դուռը բաց ա անըմ։
Ջադուն նի ա մտնըմ, մթամ թե դրա մոքիրն ա, փթաթվըմ ա, պչպաչորվըմ ա, էդ նաչարն էլ ճնանչըմ չի։
Եդնա ասըմ ա.— Գնամ քի հմար բան ու ման առնիմ՝ բերեմ։
Դուս ա գալիս, գնըմ ա ղարաուլբաշուն ասըմ ա.— Սիե, սիե. հմի ո՞նց անենք։
Ասըմ ա.— Ես բաղնիսն ուրիշ մարթ չեմ թողալ, դու նրան բի բաղնիս, դու հեռացի։
Եդնա կամ փետ ա առնըմ, ուտելու լավ-լավ բաներ ա առնըմ, հետը ղրգըմ։
Ջադուքար պառավը բերըմ ա կամփետ տալիս, բերածնին ըստոլի վրեն լքցնըմ, ինքն էլ հետն ուտըմ են, եդնա ասըմ ա.— Քոռանա քո մոքիրը, ով գիդե ինչքան վախտ ա ջրի էրես չես տեհել, արի, արի գնանք բաղնիս, քի լողացնեմ։
Ասըմ ա.— Չէ, մոքիր ջան, իմ հերն ասել ա տանից դուս չի գաս, ես կարալ չեմ։
Ասըմ ա.— Ծուռ ա արել, նա որ գիտենար ես գալ տեմ, ինձ պահ կտեր, բա հըմի որ ես էկել եմ, էլ ընչից ես վախըմ։ Գնանք բալա ջան, գնանք։
Շատ որ տեղը նեղըմ ա, իլլաջը կտրըմ ա, վեր ա կենըմ, գնըմ։
Հասնըմ են բաղնիսի դուռը թե չէ, էդ քյավթառը դրան նի յա բոթըմ ու ինքը եդ դառնըմ։

Ախչիկը հլե մին էլ տենըմ ա ղրաուլբաշին ըղաքին կաղնեց, դուռը փագեց ու բլանիքը դրուց ջեբըմը։
Դա ծվըմ ա, ճչըմ ա, հմա էլ նոր ի՞նչ կարա անե։
Ասըմ ա.— Գլուդ գլխիս հետ մին տեմ անիլ։
Ախչիկը տենըմ ա, որ էլ կարալ չի բան անել, ասըմ ա.— Լավ, հմա առաջ պտինք լեղանալ, եդնա։
Ղրաուլբաշին իրան մտկըմն ուրախանըմ ա, ասըմ ա.— Լավ կլի, արի ես քեզ լեղացնեմ։
Ասըմ ա.— Չէ, առաջ ես քեզ լեղացնեմ։
Նրան տկլորիլ ա տալի, սապոնը քսըմ ա գլխին, փրփուրը կիտըմ ա, աչքերն ա լցնըմ, մխկտոցը գձըմ, եդնա սապնաթասով գլխին վրա ա բերրմ, նղավացնըմ ա, գնըմ ա բլանիքը վեր ունըմ, դուռը բաց անըմ, ու հայդե դբա իրանց տուն։ Տուն ա մտնըմ, դուռը եդնուց պինդ փագըմ։
Ղրաուլբաշին ուշկի ա գալի, ըմանչըմ ա իրա արածից, եդնա մտկըմը դնըմ ա՝ ինատը հանե։ Տենըմ ա էլ ուրիշ ճար չկա, թաքավորի էլ գալու վախտն ա, բերըմ ա թաքավորի վրա մի նամակ գրըմ, ասըմ ա.— «Թաքավոր ապրած կենա, դու ինձ թամբահ արիր, որ քու ախչկա կուշտը մարթ չի թողամ, հմա ես ինչ անեմ, որ քու ախչիկը օրը հինգը կուշտն ա տանըմ, հինգը դուս բերըմ։ Ես էլ քու ախչկա ջուղաբը տվողը չեմ»։
Թաքավորը որ էդ նամակը կարթըմ ա, մազերը բիզ-բիզ են կաղնըմ։
Իրա տղին հրամայում ա, ասըմ ա.— Կգնաս էդ անսկամին էս թրով կը կըտրատես, արինն էլ սրփիլ չես, թուրն ու իրա շաբիքը արնակոլոլ կբերես իմ աղաքը։
Դրանց ճամփըմը գալիս թողըմ ա, ինքը աղաք ա ընգնըմ, թռցրած գալի տուն։ Գալիս տենըմ ա դուռը դայիմ փագած։ Մնըմ ա ըրմացած։
Դուռը թխկացնըմ ա, քիրն ասըմ ա.— Էդ ո՞վ ես։
Ասըմ ա.— Քու ախպերն եմ, դուռը բաց արա։
Ասըմ ա.— Ես հվատըմ չեմ, չկելն իմ հերը գա ոչ, ես օչում ըղաքին դուռը բաց չեմ անիլ։
Շատ որ ախպերը դանչանք ա անըմ, քիրն ասըմ ա.— Դե մի նշան տու, որ տենամ իմ ախպերն ես։
Ախպերը հանըմ ա իրա ձեռնաղլուխը տալի, տենըմ ա, որ դրուստ իրա կարած ձեռնաղլուխն ա։ Ըտի նոր դուռը բաց ա անըմ, ախպերը տենըմ ա կանանչը դռան տակին մի թզաբոյ ա դառել։ Նոր էնա փթաթվում ա քվոր շլնքովը պչպաչորվում են քիր ու ախպեր։
Հմի ի՞նչ անե, ինքը տենըմ ա, որ քվորը շառ են անըմ, հոր խոսքն էլ կարալ չի անկատար թողա, գիտե որ թաքավորը ղրավուլբաշուն շատ ա հվատըմ։ Տենըմ ա էլ իլլաջ չկա, ասըմ ա. «Քիրա ջա՛ն, մեր հերն ու մերը գալիս են, արի գնանք աղաքներուն»։
Քիրն ուրախանըմ ա, հազրվըմ ա, որ գնան, հմա իրան հետի պատահմունքնին ախպորն ասըմ չի, կենըմ ա հերը գա։ Ախպերը ձիուն վեր ա ըլըմ, քվորը թարքին ա դնըմ, ընգնըմ ա ճամփա։ Գնըմ են մի ծմակի թալըմը վեր գալի, որ քիչ դինջանան։
Քիրը շատ ա բեզարած ըլըմ (տանը փագվածը որ մի անգամից դուս գա, ճամփա կտրե, ինչ թավուր կլի), գլուխը դնըմ ա ախպոր գոքըմն ու քնըմ։
Ախպերը մտածըմ ա, ասըմ ա.— Լավն էն ա սրան ըստի քնած թողամ, ես գնամ։
Կամաց քվոր գլուխը բցրացնըմ ա ծնգան վրիցը, դնըմ ա մի քարի վրա, ինքը վե կենըմ գնըմ խուրջնիցը քվոր շաբքնուցը մինը հանըմ, տանըմ ա մի ալապոստրակ սպանըմ, նրա արնի միջին թուրն ու շաբիքը թթախըմ, ձիուն վեր ըլըմ, ընգնըմ ճամփա։ Տանըմ ա հորը հվատացնըմ, թե քվորը սպանել ա։

Քիրն ըտի շատ ա քնըմ, քիչ ա քնըմ, ինքը գիտե, մին էլ զարթնըմ ու տենըմ, որ ոնչ ախպեր կա կշտին, ոնչ բան։ Լաց ա ըլըմ, ձեն ա տալի, համա ծմակիցը եդ իրա ձենն ա լսըմ։ Վի յա կենըմ ու ընգնըմ էդ ծմակը, գնըմ, թե ո՞ւր, ինքն էլ չգիդե։ Գնըմ ա, գնըմ, շատն ու քիչը էլ եդ ինքը գիդե, մին էլ տենըմ ա, հրե հեռվից մարթիք են գալիս։ Ըտի մի ախպրի գլխի մի ուռըքի ա ըլըմ, դա վեր ա ըլըմ էդ ուռըքուն, որ դրանք գան անց կենան, տենան ոչ իրան։ Էկողնու մեջ Սայաթնովն ա ըլըմ։ Դրանք գալիս են էդ ախպրի կշտին վեր գալի, հաց ու մաց ուտըմ, դինջանըմ, եդնա Սայաթնովն սազն առնըմ ա (ինքը աշուղ ա ըլում) ու երգըմ։ Դա էն ղայդի երգըմ ա, որ էդ սար ու ձորը հետը ձեն ա տալի։
Դա թագավորի աշըղ ա ըլըմ, թաքավորի հետ էկած են ըլըմ ֆորս անելու, քանի երգըմ ա, թագավորն էլ ա երգիլ տալի։ Որ շատ երգըմ ա, բերանը ցմաքըմ ա, հա գնըմ ա ախպրի վրա կռանըմ, որ ջուր խմե։ Մի կում բերանը չառած՝ տենըմ ա ախպրի միջին մի սիրուն ախչիկ, մնըմ ա հուշ էլած, թե էդ ինչ բան ա։
Եդ ա դառնըմ թագավորին ասըմ ա.— Սհե-սհե։
Թագավորն ու իրա նազիրը գալիս են մտիկ անըմ, նրանք էլ են հուշ ըլըմ։
Սայաթնովը մին էլ ա գալի մտիկ անըմ, մին էլ գլուխը վեր ա քաշըմ, տենըմ ա ուռըքու վրա մի սիրուն ախչիկ նստած։
Դա որ մտիկ ա անըմ հա, ուշկը գնըմ ա։
Աղաք դրան ջուր են վրա տալի, ուշկը եդ բերըմ, եդնա թագավորն ասըմ ա.— Ո՞վ ես, այ ախչի, վեր արի։
Հմա նա տեղիցը ժաժ չի գալի։ Մին էլ նազիրն ա ասըմ, հմա եդ ժաժ չի գալի։ Ըտի Սայաթնովը եդ սազը ձեռն ա առնըմ, երգըմ ու երգով դրան վեր ա բերըմ։
Ախչիկը վեր ա գալի, ասըմ են.— Ո՞վ ես դուն, այ ախչի։
Ըտի թաքավորն ասըմ ա.— Ո՞ւմ ղսմաթն ա սա։
Ըստիան-ընդիան ասըմ են.— Տանք Սայաթնովին, նա սեր ա ձգել վրեն։
Ընդիան նազիրն աղաք ա գալի, ասըմ ա.— Դա ինձ ա լայաղ, ըսօրվա ֆորսն ինձ ա հասնըմ (չունքի ամեն օր մնի համար են ֆորս անելիս ըլըմ)։
Որ շատ, որ շատ թաքավորն ասըմ ա.— Դու կնիկ ունիս, հայ քրիստոնյան էրկու կնիկ չի պահիլ, սա կտանք մեր Սայաթնովին։
Սայաթնովն մի ուրախանըմ ա, մի ուրախանըմ ա, որ էլ ասելու ոչ։ Բերըմ են դրանց հարսանիք են անըմ։ Հմա նազիրն ընդի ղնջղնջոտըմ ա։
Անց ա կենըմ օխտը տարի, հմա էն կրակի էկածը եդ խոսըմ չի։ Սայաթնովն էնքան ա սիրըմ դրան, որ էլ ասելու ոչ։ Դրանք ունենըմ են էրկու տղա ըրեխա։ Սայաթնովը գնըմ ա վենձի համար մի փետե ձի ա առնըմ, բերըմ ա, որ տանը խաղ անե։ Հերը տանիցը դուս ա գնըմ թե չէ, էդ էրկու ըրեխեն իրար հետ կռվըմ են, իրար ծեծըմ են, լաց են ըլըմ։
Սա ասըմ ա.— Ինձ տու՝ ես խաղ անեմ։
Նա ասըմ ա.— Ինձ տուր՝ ես խաղ անեմ։
Որ շատ են կռվըմ, մերն էլ կարըմ չի նամուս անե, ասըմ ա.— Յանի որ տնաշենն էրկուսն առներ ինչ կլեր, կռվիլ մեք, բալա ջան, կռվիլ մեք, ըրիգունը գա, կասեմ մինն էլ առնի։
Վենձ տղեն մոր ձենը լսըմ ա թե չէ, ձին թողըմ ա, գալի մոր խտիտն ա ընգնըմ, ասըմ ա.— Նանի ջան, բա խի՞ չէիր չկել հըմի խոսըմ։
Ըտի նաչարը ձեռը բերնին ա դնըմ, հմա էլ նոր ի՞նչ։
Ըրիգունը Սայաթնովը տուն ա գալի թե չէ, վենձ տղեն վազըմ ա աղաքը, հորն ասըմ։
Հերն ասըմ ա.— Դե սուս կաց, էքուց էլ կկռվեք, ես իմ ընգաճովը իմանամ։

Էքսի օրը գալիս ա դռան տակին տապ ա անում, էդ ըրեխեքը կռվըմ են, էլ եդ մերներուն ասըմ ա.— Կռվիլ մեք, բալա ջան, կռվիլ մեք, ձեր հորը կասեմ, մինն էլ առնի։
Սայաթնովը, որ ձենը ընգաճովն ա ընգնըմ, քիչ ա մնըմ եդ ուշկը գնա։
Դռան տակից դուս ա գալի, գնըմ ա փթաթվըմ, ասըմ ա.— Բա որ դու տիե քաղցր լիզու ունիս, խի՞ չես էս օխտը տարըմը մին էլա ձեն հանըմ, տո անիսափ։
Ասըմ ա.— Դե ի՞նչ ձեն հանեմ, դու հե գիտես լալ եմ, ես էլ լալ եմ կենըմ, համ էլ էսքան վախտ բա ասըմ չե՞ս, թե ես էլ մորից եմ էլել, ես էլ վաթան ունիմ..... Դե դու հարց չես ըլըմ, ես էլ բան չեմ ասըմ։
Ասըմ ա ու կրակի էկածի սիրտը լքցվըմ ա, լաց ա ըլըմ։ Ըտի Սայաթնովը նոր հարց ա ըլըմ, իմանըմ ա, որ փլան թագավորի ախչիկն ա։ Դա դանչանք ա անըմ, որ իրան տանի հորանց։
Սայաթնովը սարքվըմ ա, հազրվըմ ա, որ իրա կնգանը տանի հորանց։ Ամեն բան որ պատրաստ ա ըլըմ, գնըմ ա թաքավորից իրավունք առնի։
Թագավորն ասըմ ա.— Ես առանց քեզ մի օր էլա կարալ չեմ կենամ, քի թողալ չեմ գնաս, բա ինձ հմա ո՞վ երգե։
Ասըմ ա.— Թե ուզըմ ես, իմ նազըրի հետ կղրգեմ։
Սայաթնովն էլ կարըմ չի բան ասե։
Դրանք սարքվըմ են, մի ֆայտոնի միչի Սայաթնովի կնիկն ու իրա էրկու էրեխեքն են նստըմ, մեկելնու միչին էլ նադիրն ու իրա զորքերը... Գնըմ են հասնըմ մի ծմակ, մութն ընգնըմ ա։ Դրանք ըտի ջոգ-ջոգ չատըրնի են վեր թողըմ, կրակ են վառըմ, ուտըմ են, խմըմ, քնըմ։
Սայաթնովի կնիկն էլ ջոգ չադրի միջի, իրա ըրեխանց հետ ա ըլըմ։ Քշերվա մի վախտը, որ չիմն էլ խորը քնի մեչ են ըլըմ, էդ նազիրը գնըմ ա մտնըմ էն նաչարի չադիրը։
Ասըմ ա.— Ի՞նչ ունիս ըստի։
Ասըմ ա.— Գլուխս գլխիդ հետ մին տես անիլ։
Ասըմ ա.— Չէ՛ որ չէ՛, դա ըլելու բան չի, հեռացի ըստիան։
Ասըմ ա.— Վենձ տղիդ գլուխը կտամ։
Ասըմ ա.— Թեկուզ չիմնու գլուխն էլ տաս՝ ըլելու բան չի։
Էն իսափ կտրածը վենձ տղին դնըմ ա ոտի տակին, գառան պես ճիտը կտրըմ ա, դեն գցըմ։
Եդ ասըմ ա.— Կամ գլուխդ գլխիս հետ մին տես անիլ, կամ թե չէ էն մի տղիդ գլուխն էլ եմ տալի։
Ասըմ ա.— Ուզըմ ես իմ գլուխն էլ տուր, դա ըլելու բան չի։
Էն մինն էլ ա էդ օրը գձըմ։ Նաչարը տենըմ ա էլ իլլաջ չկա, երկու տղի ընգաճնին էլ մխկտալով կտրըմ ա, ջեբը գցըմ։
Ասըմ ա.— Բա հմի ինչ ես ասըմ։
Ասըմ ա.— Էլ ինչ տեմ ասիլ, էդա քո արածը արիր, ջուխտ ըրեխիս մորթեցիր, սիրտս գնըմ ա, գնամ ըրեսիս ջուր տամ գամ։
Ասըմ ա.— Բա որ փախչե՞ս։
Ասըմ ա.— Հտայ, էդ քանդրովը կռնիցս կապե։
Նազիրը դրա կռնիցը քանդրով կապըմ ա, ասըմ ա.— Դե գնա։
Դա գուգումն էլ հետը տանըմ ա, որ մթամ ջուր բերի։ Տանըմ ա, քանդիրը կռնիցը եդ ա անըմ, գուգումի ընգնիցը կապըմ, ինքը կորչըմ։
Նազիրը ճամփա ա պահըմ, տենըմ ա էկավ ոչ։ Քանդիրը քաշըմ ա, տենըմ ա գուգումը թոլեթոլ ըլելով էկավ։ Դա ղի ա տալի, իրան մեկել զորքին ասըմ ա.— Ձեր մեշկը կոտրի, ի՞նչ եք քնոտել, դաչաղնին էկան ըրեխանցը մորթեցին, խանումին էլ փախցրին։

Դրանք վե են կենըմ դես ման գալի, դեն— կա ոչ։ Վեր են կենըմ ըրեխանց մեյիդը էդ ֆայտոնը լքցնըմ, եդ գնըմ ասըմ են.— Սիե, սիե։
Նաչար Սայաթնովը ծնգներին ու գլխին վեր ա հատըմ, իրան գլուխն ա վայ տալի— հմա նոր էլ ի՞նչ։
Էն նաչարն էլ չոլե-չոլ ընգնելով, լաց ըլելով գալիս ա մի տեղ դուս գալի։ Տենըմ ա հրե մի չոբան ոչխար ա ըրածացնըմ։ Գնըմ ա էդ չոբանի կուշտը, սոված՝ նութը կտրած ա ըլըմ, ասըմ ա.— Ինձ մի քիչ ուտելու բան չե՞ս տալ։
Էդ չոբանը դրա համար կաթն ա կթըմ խմացնըմ, եդնա հարցնըմ ա, ասըմ.— Քիրա ջան, ո՞վ ես դուն, որ մենակ էս չոլերըմը ման ես գալի։
Ասըմ ա.— Ես ճամփես մոլորած մի անտեր ախչիկ եմ։
Ասըմ ա.— Դե դուն ինձ քիր, ես քի ախպեր։
Ասըմ ա.— Չոբան ախպեր, ինձ մի լավութին արա, առ էս մատնուքը, քո շորերն ու մի ոչխարի ղառին ինձ տու, իմ շորերն էլ տար քու կնգանը հաքցրու։
Չոբանն էն հաղաղը մի ոչխար ա մորթըմ, մսից մի լավ ղաուրմա յա անըմ, ուտացնըմ, ղառինն էլ տալիս ա դրան, իրան շորերն էլ ա տալի, ինքը յափընչու միչին փթաթվըմ ա, չկել տուն հասնի։
Ասըմ ա.— Առ էս ոսկի մատնուքը։
Ասըմ ա.— Ախպերը քվորիցը հախ չի ուզիլ, դա ո՞վ գիտե, քո սիրածի տված նշանն ա, ես վեր չեմ ունիլ։
Դա դրան շնորհակալութին ա անըմ, եդ ընգնըմ ճամփա։
Գալիս դուս գալի իրա հոր քաղաքը։
Գնըմ ա իրանց տան դռանը կաղնըմ, ասըմ ա.— Ինձ նոքար չէք անի՞լ։
Իրան մերն ասըմ ա.— Վա՛յ, ոնց որ իմ բալի աչքերն ըլին։
Հերն ասըմ ա.— Շաշ ու մաշ քիչ խոսա, էս օխտը տարըմը ով գիտե նա որդի ա փթել, շան ու գիլի փայ դառել։
Եդնա դրանք դրան նոքար են անըմ, որ իրանց ղազերը պիե։
Էն կրակի էկած Սայաթնովն էլ ընդի խու դաթար չի կենըմ։ Ոնչ քշերն ա քունը տանըմ, ոնչ ցերեկն ա հանգիստ ունենըմ, իրանից երգեր ա հնարըմ ու մխկտըմ։ Մի քանի օր տհե իրան կորցրած յանդրմիշ ա ըլըմ, եդնա ասըմ ա.— Ես գնալ տեմ իմ կնգանը գդնուլ։
Իրան սազը վեր ա ունըմ ու ճամփա ընգնըմ։
Թաքավորն ինչքան ղնամիշ ա անըմ, ասըմ ա.— Նոր նրան սաղ գդնուլ չես,— իլլաջ չի ըլում։
Տենըմ ա էլավ ոչ, ասըմ ա.— Դե ես էլ եմ գալի, գնանք գըդնունք քու սիրածին։
Էն շուն նազիրն էլ հետներնուն վեր են կենըմ, ընգնըմ ճամփա։ Աշխարե-աշխարհ ման են գալի, որդի մարդ են ջհըմ՝ հարց են ըլըմ, որդի ծմակ են ջհըմ՝ տակն ու վրա են անըմ, որդի շեն են տենըմ, հարց են ըլըմ, հմա մի տեղ էլա գդնըմ չեն։ Որ շատ գալիս են, դուս գալի իրա կնգա հոր քաղաքը։ Էդ քաղքըմը գնըմ են մի ախպրի կշտի նստըմ, որ կնանիքը գան ջուրը, բալի իրա կնգանը մեչներուն տենա։ Ըտի Սայաթնովն էլ իրա սազը վի կալած, ջուռա-ջուռա խաղեր ա ասըմ, չիմ կնանիքը հվաքվըմ են թամաշա։ Թաքավորն էլ շորերը փոխած ա ըլըմ, ո՞վ գիդե թե աշուղի հետինը թաքավոր ա։
Հենց էդ վախտը հերն ախչկանն ասըմ ա.— Քյաչալ ջան, քյաչալ, գնա սառը ջուր բի խմենք։
Էրվածը գալիս ա տենըմ, որ իրա Սայաթնովն ու թաքավորը, մին էլ էն գյուլլա դիբած նազիրը ընդի նստած են։ Ըտի մին ուզըմ ա գնա մարթի խտիտն ընգնի, հմա եդ իրան պիրմ ա։

Խատատ-մատատ ջուրը կուժն ա լքցնում, տանում ա տալի հորն ու ասում ա.— Խազեին ջան, էսքան վախտ ձեր տանը ղուլլուղութին եմ անում, ձեզանից ոնչ հախ եմ ուզել, ոնչ էլ ուզում եմ, մենակ խնթրում եմ, էս քշեր թողուք իրեք ղոնախ բերեմ տուն։
Հերն էլ, մերն էլ ասում են՝ իրավունք ունիս, գնա կանչի գան։
Մթնելիս ա ըլում, գնում ա ասում.— Աշուղնի ջան, իմ խազեինը ձեզ կանչում ա էս քշեր իրան ղոնախ։
Դրանք վեր են կենում, դրա հետ գնում։ Հլա գոզալ դրանց պատիվ են անում, Սայաթնովն էլ երքում ա, դրանց ուրախացնում ա, եդնա էն եղատարը հորն ասում ա.— Խազեին ջան, ըսօր տան իրավունքը ինձ չես տա՞լ։
Ասում ա.— Խի չեմ տալ, աչքիս վրա, քյաչալ ջա՛ն։ Ըրիգունը դրանք նստում են բուխարու ղրաղին, զրից են անում դեսից, դենից, ամենքն իրանց գիդեցածից մի բան են ասում։
Եդնա իրա հերն ասում ա.— Այ իմ ղոնախնի ջան, մեր քյաչալն էս ինչքան վախտ ա իմ տանը ուսլուբին ղուլլուղ ա անում, հմա ես դեռ նրան մի բանով լավութին չեմ արել, ըսօր նա ինքը խնթրեց, որ ես ձեզ ղոնախ անեմ իմ տանը։ Ես նրա խոսքը կատարեցի, հմի էլ ես տիմ նրան մի բան խնթրիլ, թող արա մի պատմութին անե ու մեզ ուրախացնե։
Ըստիյան ընդիյան ասում են.— Հա, հա, թող մի բան ասե։
Քյաչալն աղաք ա գալի, ասում ա.— Ես կպատմեմ ձեզ հմար մի հեքիաթ, հմա պետկ ա իմ հեքիաթին անգաճ անեն փլան ղրաուլբաշին, փլան պառավը, մին էլ փլան չոբանը։
Չիմն էլ ըրմանում են։ Եդնա մարթ են ղրգրմ՝ կանչիլ տալի էս ասածնուն։
Դա չոբանին աչկով ա անում, ասում ա.— Հլա դեռ յավաշ։
Բերում ա իրան պահած ղազերից մինը մորթում, փետում, շամփրի ծերն անցկացնում, գնում ա բուխարու միչին, չոբանին ասում ա թուրքերեն.— Այ չոբան, չավուրն ղազի յանմասն, գեղան-գյալան օլմասն (մթամ թե — ղազին օրոն իլ բուխարըմն էրվի ոչ, շեմքումը կանգնի, դուս ու տուն անող էլ ըլի ոչ)։
Չոբանը հսկանում ա, իրա չոմբախը ձեռն ա ունում, շեմքըմը կաղնում ա։ Քյաչալն սկսում ա իրա գլխի էկածնին չիմ պատմիլ, հմա չկել վերչն ասում չի, թե ինքն ա։
Ասում ա.— Ըլում ա չլում մի թաքավոր, դա ունենում ա մի տղա, մի ախչիկ, դրանք գնում են մատաղ անելու, տանը թողում են ախչկանը, մենակ, պահ են տալի քաղաքի ղրաուլբաշուն։
Ըտի չիմն էլ բերաններուն բաց արած անգաճ են անում։
Մերն ընդի ծվում ա, ասում.— Էդ իմ բալի նաղլն ա։
Քյաչալս տենում ա իլլաջ չկա, ասում ա.— Թե չկել վերջը անսաս անգաճ կանեք՝ կասեմ, թե չէ՝ խու ասիլ չեմ։
Չիմն էլ ասում են.— Ասա, ասա, անգաճ կանենք։
Դա հլե ղրավուլբաշու անըմը տալիս ա, ասում ա.— Թողեք մի սհաթ գնամ դուս ու գամ, էս ինչ շոք ա։
Ընդիյան չոբանը չոմբախը դնչին դեմ ա անում, թողում չի։ Հմի էլ պառավն ա տհենց անում, հմի էլ իրա ախպերն ա տեղից վեր թռչում, վերջը որ հերթը հասնում ա Սայաթնովին, որ պատմում ա, թե ոնց ա ծառի վրից վեր բերել, քիչ ա մնում վրա հասնի դրա խտիտն ընգնի, ասե՝ դու կգիտենա՞ս ուր ա իմ սիրածը։ Հմա եդ քյաչալի դրած պայմանը միտն ա ընգնում, անսաս մնում ա, ասում ա.— Տենանք վերջն ի՞նչ ա դուս գալի։
Որ նազիրի արարմունքնուն ա հասնում հերթը, նազիրն ասում ա.— Ի՞նչ եք անտեղի էս շաշ քյաչալի զրցնուն ասգաճ անում, իմ քունը տանում ա, ես գնում եմ քնելու։
Ըտի չիմն էլ դրա վրա չրանում են, ասում են.— Սուս կաց։

Դա վեր ա կենըմ, թե դուս ըլի, էդ չոբանը չոմբախը ճկատին դեմ ա անըմ։ Վերջն՝ էլ ինչ գլուխդ ցվացնեմ, էնա չիմ ասըմ ա, իրան ըրեխանց ընգաճնին էլ դեռ պիելիս ա ըլըմ, ջեբիցը հանըմ ա, ղառինն էլ գլխիցը հանըմ ա, մազերն ուսերովը շաղ են ընցնըմ— ամեն բան աշկար ա ըլըմ, նոր դրանք բերըմ են պառավ ջադուքարին, էն ղրավուլբաշուն, մնել էն գյուլլա դիբած նազըրին կապըմ են ղաթրնու պոչիցը, քաշ տալի, ստկացնըմ են, պրծնըմ։
Ըտի նոր իրար փթաթվըմ են, թազա հրսանիք են անըմ, թազա քեփ են անըմ, պրծնըմ են ամեն ցավից ու չոռից, նրանք հասնըմ են իրանց մուրազին, դուն էլ հասնիս քու մուրազին։